

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2014թ. նոյեմբերի 28-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 23-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Է. Շաթիրյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ.

1. *Գիտական հաղորդում (զեկ.՝ պրոֆ. Գ. Հարությունյան):*
2. *Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ս. Մեղրյան):*
3. *ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:*
4. *Հաղորդում 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստության մասին (առկա և հեռակա ուսուցման բաժիններ):*
5. *Ընթացիկ հարցեր:*

1. **ԼՄԵՑԻՆ.** Գիտական հաղորդում. «Մահմանադրաիրավական բարեփոխումների արժեքանական և գիտագործնական նշանակությունը» (զեկ.՝ պրոֆ. Գ. Հարությունյան):

Հաղորդումը ներկայացվեց խորհրդի ընդլայնված կազմով նիստում:

Զեկուցողն ընդհանուր գծերով անդրադարձավ մարդակենտրոն սահմանադրաիրավական բարեփոխումների արժեքանական և գիտագործնական նշանակության հետ կապված մի շարք հարցադրումների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Գևորգյանը, Ս. Մուրադյանը, Տ. Սիմոնյանը, Ա. Ղազինյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունելի գիտություն:

Հաղորդումը կցվում է արձանագրությանը:

2. **ԼՄԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ս. Մեղրյան):

Զեկուցողը համակարգված տեսքով ներկայացրեց տեղեկատվություն ամբիոնի կողմից կատարված ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ դասավանդման մեթոդաբանության, անցկացված դասալսումների արդյունքների, գիտելիքների ստուգման եղանակների և գնահատման չափանիշների մշակման ընթացքի, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքի, այդ թվում՝ ամբիոնի անդամների հրատարակումների, գիտաժողովներին և գիտահետազոտական ծրագրերին նրանց մասնակցության վերաբերյալ:

Անդրադարձ կատարվեց նաև նոր կադրերի պատրաստման և կադրերի վերապատրաստման հարցերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Ա. Իսկոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը գնահատել լավ:

Հաշվետվությունը կցվում է արձանագրությանը:

3. ԼՄԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:

Ամբիոնի վարիչները ներկայացրեցին ամբիոնների որոշումները՝ հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման վերաբերյալ՝ հայցելով Խորհրդին հաստատել դրանք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Դանիելյանը, Ս. Դիլբանդյանը, Ս. Մեղրյանը, Ա. Վաղարշյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Ատեստավորել ներքոնշյալ անձանց՝

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն

Ասպիրանտներ

- Հովհաննիսյան Անժելա
- Բաղայան Անի
- Աղազյուլյան Անի
- Խլղաթյան Անի
- Աթանեսյան Անի

Հայցորդներ

- Կարապետյան Նարինե
- Մադոյան Սաբինա
- Սարգսյան Դավիթ

Քաղաքացիական իրավունքի ամբիոն

Ասպիրանտներ

- Դանիելյան Վարդուհի
- Մուրաֆյան Անի

- Սեդրակյան Հայկուհի
- Խչեյան Միքայել
- Սահակյան Նանե
- Չիֆլիկյան Արմենուհի
- Ավետիսյան Աննա
- Հայրապետյան Արուս

Հայցորդներ

- Սողոմոնյան Աշխեն
- Մանուչարյան Նաիրա
- Ասատրյան Տաթևիկ
- Զիլավյան Հրաչիկ

Քաղաքացիական դատավարության ամբիոն

Ասպիրանտներ

- Դալլաքյան Վահագն
- Միքայելյան Անի
- Անտոնյան Անահիտ
- Սահակյան Նարե
- Չիլինգարյան Անի

Հայցորդներ

- Եսայան Վարդուշ
- Ղարսլյան Աշխեն
- Սիմոնյան Լիլիթ
- Պետրոսյանց Լատրա

Մահմանադրական իրավունքի ամբիոն

Ասպիրանտներ

- Վարդանյան Սուրեն
- Սարգսյան Մերի
- Խալաթյան Արտաշես
- Ղազարյան Նանե

Հայցորդներ

- Եսայան Անահիտ
- Մադոյան Գուրգեն
- Ավետիսյան Տիգրան
- Ավետիսյան Ծովինար
- Մատինյան Աստղիկ
- Հակոբյան Ռուզաննա

Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն

Ասպիրանտներ

- Աղաբաբյան Նելլի
- Հարությունյան Անահիտ

- Սուջյան Տաթևիկ

Հայցորդ

- Գևորգյան Գոհար

Քրեական իրավունքի ամբիոն

Ասպիրանտներ

- Աբրահամյան Ռոզա
- Հակոբյան Գոհար
- Ստեփանյան Ժենյա
- Միրզոյան Գոռ
- Միմոնյան Գոհար
- Փիրումյան Նինա:

Բ. Չատեստավորել ներքոնշյալ հայցորդներին՝

Սահմանադրական իրավունքի ամբիոն

- Գրիգորյան Տիգրան

Քրեական իրավունքի ամբիոն

- Մնացականյան Լուսինե
- Ներկարարյան Տաթևիկ:

Սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ Գոհար Մելոյանին, Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ Անի Ղարիբջանյանին, Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ Լաուրա Ջոհրաբյանին և նույն ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Մկրտչյանին ատեստավորել պայմանականորեն՝ տեղեկացնելով վերջիններիս, որ հաջորդ տարվա մարտ-ապրիլ ամիսներին կրկին անգամ պետք է քննարկվեն նրանց կողմից կատարված աշխատանքների արդյունքները:

4. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստության մասին (առկա և հեռակա ուսուցման բաժիններ):

Խորհրդի նախագահ, պրոֆ. Գ. Ղազինյանը տեղեկացնելով, որ ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման բաժիններում առաջիկայում մեկնարկելու է 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանը, ընդհանուր գծերով անդրադարձավ քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներին՝ ամբիոնների վարիչներին հորդորելով դրսևորել հետևողականություն ստուգումների՝ սահմանված ժամկետներում և սահմանված կարգին համապատասխան կազմակերպման և անցկացման հարցում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման բաժիններում 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստության մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

5.1. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի հայցորդ Գուրգեն Ներսիսյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի հայցորդ Գուրգեն Ներսիսյանի՝ «Համագործակցության վարույթի՝ որպես քրեադատավարական տարբերակված ձևի հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 «Դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ. Ա. Ղամբարյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.2. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Հրաչիկ Յարմալոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության ճշգրտման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Ա. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ Հրաչիկ Յարմալոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառությունը հաստատել «ՄԱԿ-ի Միջազգային դատարանի դերակատարությունը միջազգային իրավաստեղծման գործընթացում» խմբագրությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Նարինե Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության ճշգրտման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Նարինե Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառությունը հաստատել «Անհատականացման միջոցների հասկացությունը և դրանց քաղաքացիաիրավական պաշտպանությունը անբարեխիղճ մրցակցությունից» խմբագրությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.4. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը ֆակուլտետի դեկան, իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Գ. Ս. Ղազինյանի և պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ա. Գ. Վաղարշյանի համահեղինակությամբ պատրաստված «Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը: Հին շրջանից մինչև մեր օրերը» վերտառությամբ մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը, Ա. Մարգարյանը, Ա. Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ «Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը: Հին շրջանից մինչև մեր օրերը» վերտառությամբ մենագրությունը շարադրված է պատշաճ գիտական մակարդակով՝ երաշխավորել այն հրատարակության:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Է. Շաթիրյան